

ՄՆԱՅՈՒՆ ՎԱՍՏԱԿ

(Նորայր Արֆ. Պողարեանի յիշատակին)

Մեծ է երջանկայիշատակ Նորայր Արֆ. Պողարեանի (Ծովական) ներդրումը ազգային հոգեւոր մշակոյթի ասպարէզում: Իր բոլորանուէր գործունէութեամբ ու ծանրակշիռ վաստակով Ն. Պողարեանը ապահովել է նաեւ իր յետմահու մասնակցութիւնը հայ բանասիրական մտքի զարգացմանը:

Այսպէս գնահատելով նրա վաստակը՝ ամենից առաջ նկատի ունենալով «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց» յայտնի հրատարակութեան ստուարածաւալ հատորները (Ա.-ԺԱ, Երուսաղէմ, (1966-1991): Առերեւոյթ դժուար է հաւատալ, քայց վստահ է, որ այս վիթխարի աշխատանքը, որն ընդգրկում է մօտ չորս հազար արժէքաւոր գրչագրերի մանրամասն նկարագրութիւնը, հեղինակը կատարել է միայնակ՝ իր աւելի քան քառասնամեայ անդուլ գործունէութեամբ:

Ն. Պողարեանի կազմած «Մայր ցուցակ»ի հատորները նիւթերի մատուցման նոյնակերպ սկզբունքներով նկարագրուած յուշարձանների մասին պարունակում են այնպիսի խոր եւ վստահելի տեղեկութիւններ, որ ըստ ամենայնի հնարաւորութիւն են ընձեռում բանիմաց հետազոտողներին այս կամ այն խնդրի շուրջ յանգելու միանգամայն ճշգրիտ եզրակացութիւնների: Որ այս գուլալութեանը հեղինակը հասել է ոչ միանգամից, այլ բազմամեայ հարուստ աշխատանքային փորձի շնորհիւ, հաստատում են Սրբոց Յակոբեանց Մատենադարանի ձեռագրաց Մայր ցուցակի նախորդ՝ 1955-1960թթ. իր հրատարակած հատորները: Փաստ է, որ սրանց ծաւալն ու սկզբունքները 60-ականներից սկսած այլեւս չեն բաւարարել կազմողին, եւ նա,

դադարեցնելով գործը, ձեռնամուխ է եղել նոր, առաւել կատարեալ ձեռագրացուցակի ստեղծմանը: Օգտագործելով նախկինում հրատարակուած համարնոյթ աշխատութիւնների լաւագոյն կողմերը՝ Ն. Պողարեանը միաժամանակ գործածել է բոլորովին ինքնուրոյն մօտեցումներ, որ նկատելի ներդրում են հայ ձեռագրագիտութեան բնագաւառում: Իր հատորներում նա ոչ միայն նկարագրում է իւրաքանչիւր ձեռագրում ընդգրկուած նիւթերի բնագրական առանձնայատկութիւնները, այլեւ առաւել արժէքաւոր յուշարձանների գրչական արուեստի վերաբերեալ ակներեւ գաղափար տալու նպատակով դնում է մանրանկարչական եւ զարդագրական առանձին նմուշներ՝ այս ուղղութեամբ եւս դրսեւորելով բարձր ճաշակ, իմացութիւն ու հմտութիւն: Բայց Ն. Պողարեանի ներկայ աշխատութեան կարեւորագոյն արժանիքներից է այն իրողութիւնը, որ հատորներում, առանց նկարագրուող նիւթերի յաջորդականութիւնը խախտելու, յաճախ բերում են նաեւ բանասիրութեանը անյայտ, նորագիտ ամբողջական բնագրեր՝ շարականներ, գանձեր, տաղեր, մեղեդիներ, ողբեր, կացուրդներ, վարքեր, վկայաբանութիւններ, գրոյցներ, մեկնութիւններ եւ այլն, որոնց հրապարակումը ինքնին շահեկան է հայագիտական տարբեր գիւղերի զարգացման համար: Տեղին է նաեւ մատնանշել, որ սոյն մօտեցումը բացայայտ ապացոյցն է գանազան ժամանակներում եւ վայրերում, գանազան պարբերականներում ու գրքերում հայ մատենագրական յուշարձանների տպագրութեան մասին հեղինակի ունեցած փառատեղեկութեան:

Զեռագրերի տեւական նկարագրութեանը զուգահեռ Ն. Պողարեանը կատարել է նաեւ քննագրագիտական, աղբիւրագիտական, մշակութաբանական մի շարք աշխատանքներ, «Սիւն» եւ այլ պարբերականներում հրատարակել բազմաթիւ յօդուածներ: Բանասիրութեանը յայտնի են «(Խել) Յովհաննէս Թլկուրանցի, Տաղգիրք» (Երուսաղէմ, 1958), «Հայ գրողներ, Ե-ժէ դար (Երուսաղէմ, 1971), «Գրիգոր Ա. կենցիցի, Թաթարաց պատմութիւն» (Երուսաղէմ, 1974) հրատարակութիւնները: Բնագրագիտական ակնյայտ արժէք ունեն «Թուղթ առ Յիզկիւրիւզիտ», «Ողբ ի վերայ անապաշխար մեղաւորաց», «Կացուրդ փոխման Աստուածածնի», «Ֆրիկի Հայրենները», ուշագրաւ գործերը, որոնք հեղինակը տարբեր ամսագրերում իր տպագրած բանասիրական այլ յօդուածների հետ միասին հաւաքել եւ ամփոփել է «Վանատուր» (Երուսաղէմ, 1993) ժողովածուի մէջ: Հայ բանասիրութեան համար անվիճելիօրէն օգտակար են Փաւստոսի, Կորիւնի, Եգնիկ Կողբացու, Փարպեցու, Թովմա Արծրունու գրքերի մէջ կատարելի սրբագրութիւններին նուիրուած հրապարակումները, որոնք բանասէրը գրել է սկզբնաղբիւրների ուշադիր ուսումնասիրական կամ նորայայտ քննադրերի հիման վրայ:

Նրա յօդուածներից շատերը, ինչպիսիք են «Կորիւնի ժամանակագրական վերջաբանը», «Եղիշէ», «Ե՞րբ կ'ապրէր Մովսէս Պատմահայր», «Մովսէս Խորենացի եւ Փիլոն», «Յովհաննէս Եպիսկոպոսապետ», «Ստեփանոս Սիւնեցիի տաղերը», «Մովսէս Պատմահայր եւ Կամսարականք» եւ այլն, փաստերի նշգրիտ ու նպատակաւաց քննութեամբ սպառիչ կերպով լուծում են առաջադրուած խնդիրները կամ երեւան են բերում արծարծուող հարցերի մեկնաբանման բոլորովին թարմ, ինքնատիպ եւ հետաքրքիր տեսակետներ, որ մոտեր են

շարժում եւ կարող են հայագիտական նորանոր հետազոտութիւնների համար խթան հանդիսանալ:

Ն. Պողարեանի հետաքրքրութիւնների ոլորտից չեն վրիպել շարականագիտութեան խնդիրները: Այս ուղութեամբ կատարած աշխատանքներում եւս իր եզրակացութիւնները նա կառուցել է սկզբնաղբիւրներով աւանդուած իրական փաստերի վրայ: Այսպէս, յայտնաբերելով, որ մի շարք ձեռագիր շարակնոցներում Համօրէն Ննչեցեցոյ կանոնի 17 պատկերներ դրուած են բուն կանոնից զատ, եւ հետագայ գրչագրական յաւելումներ են, ուսումնասիրողը «Պետրոս Գետադարձի վերագրուած շարականները» յօդուածով հաստատում է, որ դրանք հեղինակել է ոչ թէ ԺԱ դարի կաթողիկոսը, ինչպէս հաւատում է Շարակնոցի առաջաբան-ցուցակը, այլ պատկանում են աւելի ուշ ժամանակների շարականագիրների («Վանատուր», էջ 162-172):

Որ Ն. Պողարեանի մատնանշած շարականները, բացառութեամբ ԳԿ շարքի «Յանըսկըզբնական ծոցոյ Հօր...» Ողորմեայի, իսկապէս ԺԲ դարից յետոյ են մուտք գործել Շարակնոց, հաստատում է Երեւանի Մատենադարանի թիւ 9838 ձեռագիրը, որն առհասարակ հնագոյնն է շարակնոցներից (օրինակուած Երուսաղէմ, 1193 թ.): Այստեղ Հանգստեան կանոնի շարքերից բացակայում են դրանք, որ դարձեալ նշան է, թէ ստեղծուել են աւելի ուշ: Իսկ ինչ վերաբերում է մեր ասած բացառութեանը, պէտք է նկատել հետեւեալը: Յօդուածում «Յանսկզբնական ծոցոյ Հօր...» ողորմեայի համար Ն. Պողարեան չի վկայակոչում որեւէ ձեռագիր, ուր տուեալ պատկերը գրուած լինի իբրեւ հետագայ յաւելում, արտաքին «Գետադարձի համարուած հնագոյն կանոնէն», եւ լոկ նշում է, թէ «Զեռ. թիւ 1654 չունի» (անդ, էջ 172, հ. 13): Ճիշտ

է՝ խնդրոյ առարկայ ողորմեան բացակայում է տուեալ շարակնոցի հետագայ յաւելագրում ժամանակ (Մայր ցուցակ ձեռագրաց Ս. Յակոբեանց, հ. Ե. 1971, էջ 489-490), բայց առկայ է առաջին՝ հին մասում ընդօրինակուած Հանգստեան կանոնի մէջ (անդ, էջ 487, ձեռ. էջ 305), որը պարզապէս վրիպել է յօդուածագրի ուշադրութիւնից: Բացի այդ՝ հին կարգաւորման Շարակնոցի մնացած բոլոր յայտնի օրինակներում եւս սոյն Ողորմեան ոչ թէ հետագայ գրչագրական յաւելում է, այլ բուն կանոնի մասը կազմող շարական (Նրեւան, թիւ 9838, էջ 50 ա: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վեներտիկ, հ. Դ, յօրինեց հ. Սահակ Վրդ. Ճեմնեմեան, Վեներտիկ, 1993, էջ 344-345, #17, էջ 389, #2): Ուստի եւ պէտք է ընդունել, որ «Յանսկզբնական ծոցոյ Հօր...» ողորմեան, այսպէս ասած, «յետնագոյն» գրողներ ստեղծագործութիւն չէ եւ բոլորովին պատահականօրէն է մտել Ն. Պողարեանի կազմած ցանկում:

Ն. Պողարեանի շարականագիտական ուսումնասիրութիւններից իր ընդհանրացնող բնոյթով եւ փաստական նիւթի ընդգրկմամբ յատկապէս առանձնանում է «Հայկական Շարակնոցի խմբագրութիւնները» («Սիոն» Երուսաղէմ, 1977, էջ 56-60) փոքրածաւալ, բայց մեծարժէք յօդուածը: Անհրաժեշտ է նկատել, որ Շարակնոցի խմբագրութիւնների խնդրին նրանից առաջ անդրադարձել են մի շարք հետազոտողներ՝ գերագնացապէս է. դարում Ներսէս Գ Տայեցի կաթողիկոսի (641-661թթ.) նախածնունդէն առաջ կանոնակարգման մասին վարդան Արեւելցու եւ Կիրակոս Գանձակեցու վկայակոչումները ֆննելու կապակցութեամբ: Ոմանք էլ, ելնելով հետագայ ժամանակների շարականագիրների գործերով ժողովածուն համալրուելու

պատմական իրողութիւնից, փորձել են որոշ ժամանակային յաջորդակարգով առանձնացնել նաեւ այլ խմբագրութիւններ (առաջին, երկրորդ, երրորդ)՝ կապելով զանազան գործիչների անունների հետ (Ստեփանոս Սիւնեցի, Խոսրով Անձեւացի, Ներսէս Շնորհալի, Գեորգ Սկեւոացի, Կիրակոս Վարդապետ): Բայց այս ուղղութեամբ ասուածն ու արուածը, քանի որ չեն բխում իրական փաստերի վերլուծութիւնից, առաւելապէս հապնեպ ենթադրութիւններ են, քան յատուկ ֆննութեամբ հաստատուած կարծիքներ:

Շարակնոցի խմբագրութիւնները դասակարգելիս Ն. Պողարեանը դրսեւորել է միանգամայն այլ մօտեցում: Նա չի անդրադառնում ժողովածուի պատմական զարգացման խնդիրներին կամ այդ մասին պահպանուած գրաւոր ինչ-ինչ տուեալների ֆննութեանը, այլ միայն առաջնորդում է «զանազան ժամանակներու մէջ եւ այլեւայլ տեղեր օրինակուած» որոշակի ձեռագրերի տիպաբանական առանձնատեսութիւններով: Ըստ այդմ՝ նա տարբերակում է չորս հիմնական խմբագրութիւններ.

Ա. Բարսեղեան,

Բ. Խիկեան (Խլկցի),

Գ. Ունիթորական,

Դ. Ձայնաշար (Ձայնփայ) (Անդ. էջ 58)

Ներկայ ցանկը Շարակնոցի մեզ հասած քաղաքիւ օրինակների մանրակրկիտ ֆննութեամբ կատարուած առաջին գիտական լուրջ դասակարգումն է, թէպէտ եւ ենթակայ որոշ համալրման եւ ճշգրտումների: Ցատկապէս նկատի ունենալ տարբեր տեսակի այն խառն խմբագրութիւնները, որոնք միաժամանակ յարում են Ա եւ Բ, Բ եւ Գ, երբեմն էլ՝ Ա, Բ, եւ Գ խմբագրութիւններին, ուստի եւ հնարաւոր չէ դասել նշուածներից եւ ոչ մէկի տակ՝ առանձին առնուած:

Ն. Պողարեանի յօդուածի յաջորդ եւ

ամենաարժեքավոր կողմը, մեր համոզմամբ, պահպանուած հնագոյն խմբագրութեան յայտնաբերումն ու քննութեամբն է:

Այս խմբագրութիւնը բանասերը անուանել է Բարսեղեան՝ «այն ենթադրութեամբ թէ Ներսէս Շնորհալիի ժամանակակից Դրագարկցի Բարսեղ եպիսկոպոսն է զայն կազմողը» (անդ): Որոշակիօրէն պարզ չէ սոյն ենթադրութեան հիմքը եւ Դրագարկցի Բարսեղ եպիսկոպոսի «կապը» Շարակնոցի խմբագրութեան հետ: Արժէ փոքր-ինչ յստակութիւն մտցնել:

Յայտնի է Վարդան Արեւելցու վկայութիւնը Ներսէս Տայեցու յանձնարարութեամբ Շիրակի Դպրավանքի առաջնորդ Բարսեղ ձոնի ընտրութեամբ կազմուած «ձոնընտիր» շարակնոցի մասին (տե՛ս Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1863, էջ 69), որ անընդունելի է դիտել Մ. Արեղեանը է. դարի համար: «Հաւանական է կարծել-շարադրանքի տողատակին ծանօթագրել է նա - որ... դէպքը երեւի ժ. դարից, Ներսէս Շնորհալուց եւ իր ժամանակակից «ամենագովելի» եւ «աստուածաշնորհ» Բարսեղ Վարդապետից (+ 1162թ.) փոխած է է. դար Ներսէս Շինողի ժամանակը» (Մ. Արեղեան, Երկեր, հ. Գ. Երեւան, 1968, էջ 530): Վարդապետի մահուան տարին եւ նրա հասցէին գործածուած դրուատական մակդիրները Մ. Արեղեանը քաղել է Ուռնայեցու մատենանը շարունակող Գրիգոր Երէցի ժամանակագրութիւնից, ըստ որի՝ Բարսեղ վարդապետը «թաղեցաւ ի վանքն ի Դրագարկ» (տե՛ս Մատթէոս Ուռնայեցի, ժամանակագրութիւն, Երեւան, 1991, էջ 412, 476): Բարսեղ վարժապետին, որպէս Դրագարկի սուրբ ուխտի անուանի առաջնորդի, որը վախճանուել է ՈժԲ (1163) թուից մի քիչ առաջ, իր յիշատակարաններէից մէկում մտաբերում է նաեւ Ներսէս Լամբրոնացին (Գ. Յակոբեան, Ներսէս Լամբրոնացի, Երեւան,

1971, էջ 357): Հետեւութիւնը պարզ է. չնայած Հայր Բարսեղին տրուած տարբեր մականուններին՝ վարդապետ (վարժապետ), թէ եպիսկոպոս, երկու բանասերներն էլ նկատի ունեն նոյն անձնաւորութեանը: Նշանակում է՝ Ն. Պողարեանն իր ենթադրութեամբ հետեւել է Մ. Արեղեանի մօտեցմանը:

Շարակնոցի ներկայ խմբագրութեան ուսումնասիրութիւնը Ն. Պողարեանն իրագործել է Երուսաղէմի Ս. Յակոբեանց Մատենադարանի թիւ 1654 ձեռագրի քննութեամբ: «Այս խմբագրութեան - յատուկ նշել է նա - մեզի ծանօթ է մէկ ձեռագիր միայն, որ կը գտնուի Ս. Յակոբեանց Մատենադարանի մէջ եւ կը կրէ 1654 թիւը» («Սիոն» 1977 էջ 58): Բայց յօդուածում բանասերը ճշտօրէն նոյն խմբագրութեանը պատկանող օրինակներ է համարում նաեւ Երեւանի Մատենադարանի թիւ 9838 եւ Վենետիկի Միխիթարեանց Մատենադարանի թիւ 97 գրչագրերը: Այստեղ աւելորդ չէ մատնացոյց անել նաեւ Դ օրինակը՝ Վենետիկի թիւ 500 թերի Շարակնոցը՝ իր հին մասով (տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց... Վենետիկ, հ. Դ. էջ 387-394), որի մասին տեղեակ չի եղել վաստակաշատ բանասերը:

Արդարեւ, Երեւանի ձեռագիրը «Շարակնոց-Մանրուսմունք-Տօնացոյց» է: Սրա հնագոյն մասը, որ վերաբերում է Շարակնոցին, արդէն նշուել է՝ գրուած է 1193 թուին: Երուսաղէմի գրչագիրը «Խազգիրք-Շարակնոց» է եւ վերագրում ժ. դարին, իսկ Վենետիկի շարակնոցները՝ ժ. դ. եւ ժ. դարերին: Չորս ձեռագրերն էլ հետագայ գործածութեան նպատակով աւելի ուշ ենթարկուել են վերանորոգման եւ սկզբից կամ վերջից, երբեմն էլ միջին մասերից լրացուել են այն կանոններով ու շարականներով, որոնք անյայտ պատճառներով ընկած են եղել, կամ ուշ յօրինուած լինելու հանգամանքով նախապէս

ընդգրկուած չեն եղել:

Նորայր Պողարեանն այս հին խմբագրութեան համար նկատելի եւ նշգրիտ կերպով մատնանշել է տարբերակին երկու էական առանձնայատկութիւններ.

ա. խմբագրութիւնը բացուած է. «Աստուածայայտնութեան նրազայուցին» կանոնով, որն սկսուած է «Ուրախացիր, Սըրբուհի...» Օրհնութիւն շարականով: Աւելացնենք, որ սա համապատասխանում է տպագիրների Դ կանոնին: Ն. Պողարեանի սոյն դիտարկումն անառարկելի կերպով հաստատում է այն իրողութեամբ, որ չորս ձեռագրերի մէջ էլ տուեալ սկսուածքը համընկնում է գրչագրերի առաջին պրակին (ա թերթին):

բ. խմբագրութեան Ապաշխարութեան կանոնի մէջ դրուած են «նախ վեց Ա.Զ Հարցեր, ապա վեց Ողորմեաններ եւ յետոյ նոյնքան Տէր յերկնիցներ» (Սիոն» 1997 էջ 58): Այս վերջին ձեւակերպման կապակցութեամբ անհրաժեշտ է նկատել, որ նշուած կազմութիւնը բնորոշ է ոչ միայն Առաջին Զայն շարքի, այլեւ նոյն կանոնի մնացած շարքերի համար, մի փաստ, որ թէպէտ յօդուածում անուշադրութեան մատնուած, բայց աւելի վաղ Երուսաղէմի ձեռագրաց նկարագրութեան մէջ Ա.Կ ձայնի առիթով արձանագրել է ինքը՝ հետազօտողը: «Նախորդին պէս - կարդում ենք Ն. Պողարեանի ծանօթագրութիւնը - առաջ Հարցերը դրուած են եւ ապա Ողորմեանները

եւ Տէր յերկնիցները, Ա.-Զ թուագրեալ: Նոյնպէս եւ յաջորդ ձայները» (Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ե, Երուսաղէմ, 1971, էջ 486, ձեռ. էջ 271): Ապաշխարութեան կանոնի ներկայ դասաւորութեան կարգը առկայ է Երեւանի (էջ 37բ-47ա) եւ Վենետիկի թիւ 97 (տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց... Վենետիկ, Դ. էջ 344, #16) ձեռագրերում:

Անշուշտ, սոյն խմբագրութեան բոլոր չորս ձեռագրերի համեմատական ուսումնասիրութիւնը երեւան է հանում մի շարք այլ առանձնայատկութիւններ եւս, որոնք կարելի է գործնական նշանակութիւն ունեն ինչպէս խառն կազմութեամբ խմբագրութիւնները դասդասելու, այնպէս էլ Ե-ԺԲ դարերին ստեղծուած կանոնները (հետեւաբար նաեւ շարականները) նորերից որոշակիօրէն սահմանագատելու առումներով:

Բայց այս արդիւնքի համար նախ եւ առաջ պարտական ենք լուսահողի Ն. Պողարեանին, որովհետեւ նրան է պատկանում Շարակնոցի պահպանուած հնագոյն խմբագրութիւնը յայտնաբերելու եւ այն գիտականօրէն բնութագրելու նախապատուութիւնը: Եւ յաջորդ արուող ու անելի ֆայլերը պայմանաւորուած են սոսկ նրա գծած ուղու տրամաբանական ընթացքով:

ՎԱՐԱԳ ՆԵՐՍԻՍԵԱՆ

(ՀՀ ԳԱԱ Մ. Արեղեանի անուան Գրականութեան ինստիտուտ, Երեւան)